ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գնա, արի, ման արի....6
Երեսդ վարդ լմանի....7
Էս գիշեր էրազ տեսա....8
Արտի վրի իզը....9
Գնա, արի, իմ լուսին....10
Շուշո....11
Տիկին, արի ընձի լսե....12
Օրոր....13
Նշանդրեքի երգ....14
Արի տանեմ Արազը....15
Ծերություն....16
Ջան գյուլում....17
Կլոր գյունա բախան....17
Էս աշխարհն էլ երազի պես....18
Աշխարհումս ես մեկ այգի ունեցա....19
Բուլելի....20
Տաճիկը նոր ջուրն անցավ....21
Էս իմ յարը ֆռանկ է....22
Քնա մայրիկ, մահս տեսա....23
Ջոր ու գիշեր....24
Տղա ես, աչքի շող ես....25
Հանդումը մնաց յարս....26
Աշնան գիշեր, զով գիշեր....27
Սև կտավատ....28
Մանթաշի ձորում....29
Հարազատ զավակս....30
Մնաս բարով կանաչ գարուն....31

Սույն ժողովածուն տպագրվել է «Ծիրանափող» մշակութային, երիտասարդական ՀԿ կողմից իրականացված «Արժևորենք ազգային երաժշտական մշակութային ժառանգությունը Շիրակի մարզում» ծրագրի շրջանակներում:
Ծրագիրը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարության կողմից:

Շիրակի ժողովրդական երգերի ժողովածու

Պահպանենք և փոխանցենք ազգային երաժշտությունը Շիրակի մարզում

Գյումրի 2020

Առաջաբան

Պատմական, աշխարհաքաղաքական իրողությունների բերումով XIXդ. կեսին – XXդ. սկզբին Շիրակը դարձավ ազգային վառ դիմագիծ կրող արևմտահայության մի զգալի հատվածի նոր հանգրվանը, որտեղ հնարավոր եղավ անդառնալի կորստից փրկել և պահպանել էթնիկ մշակույթի՝ ազգագրության և բանահյուսության հարուստ ժառանգությունը: Վերջինիս ուսումնասիրությունը խորհրդային տարիներից հայ գիտական մտքի տիրույթում է և այսօր էլ որոշակի գիտական հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ արևմտահայության հոսքը դեպի Շիրակի տարածաշրջան իր հետ բերել է մշակութային յուրահատուկ վառ գծեր:

Հայրենազրկված արևմտահայության էթնիկ ինքնության կարևորագույն տարրերը դարերի հոլովույթում ձևավորվել և զարգացել էին նաև ժողովրդական երգերի մեջ: Արտահայտչական անսահմանափակ հնարավորություններ ունեցող և ժանրային որոշակի համակարգի մեջ զարգացող այս արվեստը հատկապես գյուղական միջավայրում նաև տեղային ավանդույթի բացառիկ կրողն է: Բանավոր ավանդված ժողովրդական երգը համարվում է հոգևոր ժառանգություն, պատմական հիշողություն, ինչպես նաև գեղարվեստական մտածողության տեսակ, որը ցանկացած պահի կարող է նորովի կերպավորվել:

Ըստ Կոմիտասի՝ «Երգաստեղծության շնորհը գեղջուկի համար մի բնատուր պարգև է, ամենքն էլ լավ կամ վատ, խաղ կապել և երգել գիտեն: ... Շինականի համար իր առօրյա ստեղծագործությունն արժեք չունի, հացի ու ջրի պես մի ակամա պահանջ է: Գյուղացին իր երգերի շատ տեսակներն արհամարհում է, ծիծաղում է ուսում առածների վրա, որ խնամքով գրի են առնում, ժողովում են այդ «ճեռոք բաներն ու աղջկա խաղերը»[1]:

Ժողովրդական ստեղծագործության գլխավոր նպատակները վեր են գեղարվեստական ոլորտներից, թեև իրականացվում են նախևառաջ գեղարվեստական ճանապարհներով, ինչը կասկածից դուրս է: Ի մի բերելով ժողովրդական երաժշտական ստեղծագործության բազմաթիվ մասնավոր կոչումները՝ ֆոլկլորագետները եզրակացրել են, որ նրա գերագույն գործառույթը «մարդկայնության վերարտադրությունն է մարդու մեջ: Ոչ թե առհասարակ վերացական մարդկայնությունը, այլ բավական կոնկրետ, պատմականորեն տվյալ մշակութային ավանդույթով նախորոշվածը, որին այսպես թե այնպես պետք է հաղորդակցվի յուրաքանչյուր ձևավորվող անհատականություն»[2]:

1. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 15:
2. Алексеев Э. Фольклор в контексте современной культуры, Москва, 1988, стр. 170.

Մնաս բարով կանաչ գարուն



Մարգարյան Լիզա Գուրգենի
Ծնվել է 1935թ. Քարաբերդում: Նախնիները գաղթել են Մուշից՝ 1915թ.:
Կրթությունը՝ ութնամյա:

Հարազատ զավակս



Մարգարյան Լիզա Գուրգենի
Ծնվել է 1935թ. Քարաբերդում: Նախնիները գաղթել են Մուշից՝ 1915թ.:
Կրթությունը՝ ուբնամյա:

Այսպիսով, կարելի է պնդել, որ ժողովրդական երգը, ինչպես առհասարակ ժողովրդական ստեղծագործությունը, ապրում և գործառվում է գրեթե օրգանական բնության օրենքներով: Ուրեմն, որպես «կենդանի օրգանիզմ», ժողովրդական երգը գոյակցում է արտաքին երևույթների որոշ տարրերի հետ, դրանց յուրացման շնորհիվ պահպանելով ստեղծագործության հորինվածքի ողնուցը կամ հենքը:

Ժամանակը շատ բարդ ու ազդու գործոն է ավանդական, ոչ նյութական մշակույթի ցանկացած դրսևորման, առավել ևս ժողովրդական երգի գոյատևման և պահպանման գործում: Ժողովրդական երգի կենսատու միջավայրի փոփոխման և մշակութային էկոլոգիային սպառնացող որոշ հիմնախնդիրների համատեքստում փորձել ենք դիտարկել Շիրակի մի շարք գյուղական համայնքներում «ապրող» երգային բանահյուսության առանձնահատուկ դրսևորումներին: Հիմնվել ենք 2020թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ, «Ծիրանափող» հասարակական կազմակերպության կողմից իրականացրած ազգագրական, բանահյուսական արշավախմբերի նյութերի վերլուծության վրա: Ծրագրի շրջանակներում բանահավաքչական աշխատանքներ են իրականացվել Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանի շուրջ 15 գյուղական համայնքներում: Ձայնագրվել, նոտագրվել և մշակվել են մոտ 50 երաժշտական բանահյուսական նմուշներ, որոնք աչքի են ընկնում ժանրային բազմազանությամբ:

XXIդ. սկզբին, չնայած համաշխարհայնացման արդի գործընթացների ներգործությանը /հեռուստացույց, համացանց, կապի այլ միջոցներ/, Շիրակի տարածաշրջանի ցանկացած գյուղում հնչում են ժողովրդական երգեր՝ տեղային նմուշների գերակայությամբ: Նյութի կրողներն ու կատարողները հիմնականում տարեց և ծեր անձինք են, որոնք սուրբ մասունքների նման են վերաբերվում ավագ սերնդից իրենց ժառանգած երգային նմուշներին:

Այսպիսով, մեզ հետաքրքրող երգերի մի մեծ խումբը պետք է դիտել որպես նախորդ սերունդներից հաջորդին փոխանցված ժառանգություն: Հետևաբար, այս երգերը մեծ մասամբ ապրում ու գոյատևում են որպես հիշողություն: Սրանով է պայմանավորվում երգերի ժանրային համակարգի փոխակերպված պատկերը. պահպանվել են ընտրովի, նախասիրված ժանրերը:

Այստեղ տեղին է մեջբերել երաժշտագետ Ա.Փահլևանյանի կողմից կատարված դիտարկումները խնդրո առարկայի շուրջ. «Ժամանակի ստիպմունքով որոշ ժանրեր դուրս են մղվում ժողովրդի երաժշտական կենցաղից: Բանահյուսական ժանրը ժամանակի համեմատ վրիպում է մի քանի պատճառով.

ա) կորցնում է իր ստեղծագործական հողը, այն պարտադիր պայմանները, որոնց մեջ ծնվում է այն, զարգանում, փոխանցվում, այսինքն՝ կտրվում է իր պատմաաշխարհագրական, սոցիալ-հոգեբանական հիմքերից /վիպերգեր, պատմական երգեր, պանդխտության երգեր/,

բ) կորցնում է իր ֆունկցիան /հոգևոր, ծիսական, աշխատանքային երգեր/,

գ) սոցիալ-հոգեբանական գործոնների փոփոխության հետ դուրս է գալիս մարդու արվեստընկալման համակարգից, որպես ժանր դադարում է հոգևոր պահանջ լինելուց /օրորոցային, մանկախաղաց, առտնին-աշխատանքային կենցաղային երգեր/,

դ) երաժշտական-բանաստեղծական բարդ կառուցվածքը պահանջում է կատարողական բարձր մակարդակ, գրեթե մասնագիտական-ավանդական փոխանցում և բացառում է պատահական կրող ու կատարում, ավանդի հեշտ փոխանցում /հայրեն, վիպերգային, աշխատանքային, ծիսական, աշուղական/»[3]:

Իր ժանրային կենսունակությամբ բացառիկ տեղ է գրավում **պարերգի** ժանրը: Հայ բազմադարյա մշակույթում մեծ է եղել ժողովրդական գեղջկական պարերգերի երաժշտական, պարային ու բանաստեղծական արվեստի նշանակությունը՝ որպես ժողովրդի արվեստի ամենահարազատ, ամենահուսալի ու կենարար ելակետային ակունք:

Շիրակի տարբեր համայնքներում այն այսօր էլ հանդիպում է **խաղ, խանա, թաղալո, մանի** անվանումներով: Տարածված են ինչպես կրկնատողերով և կրկնակներով, այնպես էլ առանց կրկնությունների խաղիկները՝ պարզ մեղեդային հորինվածքներով: Դրանց որոշ նմուշներ առանձնացել են տարբեր ծիսակարգերից և ապրում են ինքնուրույն կյանքով: Կարևոր արտահայտչականություն ունեն շեշտված վանկերի համաչափ և ոչ համաչափ հարաբերակցությունները:

Ժանրի կենսունակությունը պայմանավորված է նախ՝ կրկնակների ու կրկնատողերի բանաձևված բաղադրիչների առկայությամբ, ապա նաև բովանդակային բազմազանությամբ: Այս է պատճառը, որ պարերգի ժանրին են միահյուսվել նաև ծիսական և կենցաղային տարբեր իրավիճակների երգեր: Փոքրիկ խաղիկների կողքին պահպանվել են նաև ծանր պարերգերի՝ գովընդների եզակի նմուշներ:

Բազմազան են նաև **ծիսական** երգերը, որոնց մեջ գերակշռում են հարսանեկան և Համբարձման ծեսի երգերը: Բազմատեսակությամբ և կենսականությամբ է պայմանավորված նաև դրանց նորովի ծիսականացումը հատկապես հարսանեկան ծիսակարգում: Այս նմուշները հատուկ վերլուծության կարիք ունեն, քանի որ դրանցից շատերի մեղեդիները տիպականացվել և յուրօրինակ ինքնուրույն կյանքով են ապրում՝ հարմարեցվելով նոր անհատ հեղինակի բանաստեղծությանը: Երգերի բանաստեղծական տեքստերում գերակշռում է գրական հայերենը, ինչը վկայում է դրանց նախնական տարբերակների փոխակերպումների մասին: Կարծում ենք, որ այս երևույթը ոչ միայն ժամանակի և նոր միջավայրի արդյունք է, այլև՝ աշուղական երգերից ազդվելու հանգամանք:

3. «Թալին. Հայկական ժողովրդական երգեր և նվագներ», կազմողներ՝ Ա.Ս.Փահլևանյան, Ա.Սահակյան, Երևան, 1983, էջ18:

Մանթաշի ձորում



Ջույգ այտերիդ վրա փոսեր,
Այտդ վարդի հետ կխոսեր,
Սիրուն փոսեր գեշ մարդերուն,
Պագ մե ի տալ շատ ափսոս էր,
Սրտիցս արյուն կհոսեր:

Գովքը կուգա Բուլանըխա,
Աղջիկ քնքուշ, քան մանանա,
Քամին զարկե ծոցիդ, բանա,
Երես տեսնի, աղոթք մոռնա,
Անհավատն ինչպես հայ դառնա:

Պողոսյան Հենզել Արարատի
Ծնվել է 1950թ. Սպանդարյանում: Նախնիները՝ Կարսից են:
Կրթությունը՝ բարձրագույն:

Սև կտավատ



Զույգ այտերիդ վրա փոսեր,
Այտդ վարդի հետ կխոսեր,
Սիրուն փոսեր գեշ մարդերուն,
Պագ մե ի տալ շատ ափսոս էր,
Սրտիցս արյուն կհոսեր:

Գովքը գուկա Բուլանըխա,
Աղջիկ քնքուշ, քանց մանանա,
Քամին զարկե ծոցիդ, բանա,
Երես տեսնի, աղոթք մոռնա,
Անհավատն ինչպես հայ դառնա:

Պողոսյան Հենզել Արարատի
Ծնվել է 1950թ. Սպանդարյանում: Նախնիները՝ Կարսից են:
Կրթությունը՝ բարձրագույն:

Ազգաերաժշտաբանական տարբեր հետազոտություններում առանձնահատուկ տեղ են գրավում բանավոր ավանդույթի ստեղծագործությունների կենսական գոյաբանության խնդիրներն ու դրանց ուսումնասիրության մեթոդաբանական յուրահատկությունները: Ժողովրդական ստեղծագործության մեջ դասական ժառանգություն է համարվում ոչ թե երգերի ընտրանին, այլ յուրահատուկ երաժշտաարտահայտչական գենետիկ ֆոնդը, որը բնազդորեն պաշտպանվում է՝ ազգամիջյան հետաքրքրությունների ու փոխազդեցությունների ակտիվության պայմաններում:[4] Գրառված, ձայնագրված ժողովրդական երգը կարող է գոյատևել բավական երկար ժամանակ: Սակայն ավանդույթը՝ երգաստեղծության ստեղծարար մեխանիզմը, որը հիմնված է դարավոր գենետիկ հիշողության և փորձի վրա, կարող է գոյատևել միայն նոր երգերի ստեղծման և կատարման պայմանների առկայության դեպքում:

Շիրակի արդի բանահյուսության մեջ թեև սակավաթիվ, սակայն երգաստեղծության կենդանի ավանդույթով ստեղծված երգերի նմուշներ հանդիպում են: Դրանք, անշուշտ, անհատ երգասացների տաղանդի արգասիքն է: Կարևոր է այն, որ այդ երգերը, արարվելով համայնքային միկրոմիջավայրի մեջ, կատարվում են որպես ավանդական դասական նմուշներ:

Այս առումով բացառիկ տեղ են գրավում **օրորները** ու **ողբերգերը**, որոնց ժանրային առանձնահատկությունները հնարավորություն են տալիս ասացողին ազատորեն ստեղծագործելու և անկաշկանդ շարադրելու երաժշտաբանաստեղծական հորինվածքը՝ ըստ տվյալ պահին ունեցած ապրումների և զգայական վիճակի: Թեև ասացողներից շատերը հղում են կատարում իրենց մեծերից լսած նմուշներին, սակայն պարզ վերլուծությունից անգամ ակնառու է դրանց հանկարծաստեղծ անհատական բնույթը, ինչը նաև լավագույնս վկայում է երգաստեղծության ավանդույթի կենսականության ու ինքնատիպ դրսևորումների մասին:

Ծրագրի ղեկավար՝ Ղարիբ Հարությունյան
Ծրագրի փորձագետ-նոտագրող՝ Հասմիկ Հարությունյան

4. Фомин В. Способ существования музыкального произведения и методология сравнительного анализа, // Музыкальное искусство и наука. Москва, 1973, вып. 2.

Գնա, արի, ման արի



Հովհաննիսյան Մանյա Վազգենի
Ծնվել է 1935թ. Լեռնակերտում: Նախնիները՝ Մուշից ու Ալաշկերտից են:
Կրթությունը՝ թերի միջնակարգ:

Աշնան գիշեր, զով գիշեր



Շաղն իջե, գետին նիշշե,
էկել է Արազն, անցել է:

Լուսո ջան, ֆայտոնն էկել է,
էկել է, Արազն անցել է:

Ծաղկի նման բացվել ես,
Լուսո ջան, ֆայտոնն էկել է:

Պողոսյան Հենզել Արարատի
Ծնվել է 1950թ. Սպանդարյանում: Նախնիները՝ Կարսից են:
Կրթությունը՝ բարձրագույն:

Հանդումը մնաց յարս



Հովհաննիսյան Մանյա Վազգենի
Ծնվել է 1935թ. Լեռնակերտում: Նախնիները՝ Մուշից ու Ալաշկերտից են:
Կրթությունը՝ թերի միջնակարգ:

Երեսդ վարդ լմանի



Վարդ ես տանում, ինչ անեմ,
Մարգարիտը ինչ կանեմ,
Յարիս բերեք, որ տեսնիմ,
Ալ այլուղը ինչ կանեմ:

Հովհաննիսյան Մանյա Վազգենի
Ծնվել է 1935թ. Լեռնակերտում: Նախնիները՝ Մուշից ու Ալաշկերտից են:
Կրթությունը՝ թերի միջնակարգ:

Էս գիշեր էրազ տեսա



Հովհաննիսյան Մանյա Վազգենի
Ծնվել է 1935թ. Լեռնակերտում: Նախնիները՝ Մուշից ու Ալաշկերտից են:
Կրթությունը՝ թերի միջնակարգ:

Տղա ես աչքի շող ես



Հովհաննիսյան Մանյա Վազգենի
Ծնվել է 1935թ. Լեռնակերտում: Նախնիները՝ Մուշից ու Ալաշկերտից են:
Կրթությունը՝ թերի միջնակարգ:

Զոր ու գիշեր



Ճավոշյան Անահիտ Արտաշեսի
Ծնվել է 1956թ. Փանիկում: Նախնիները Կարինից են:
Կրթությունը՝ միջնակարգ:

Արտի վրի իզը



Մանուկյան Թամար Գուրգենի
Ծնվել է 1966 թ.: Նախնիները Սպանդարյանից են:
Կրթությունը՝ միջնակարգ:

Գնա, արի, իմ լուսին



Սմբատյան Սվետլանա Վաղարշակի
Ծնվել է 1942թ. Քարակերտում, բնակվում է Իսահակյան գյուղում:
Նախնիները՝ Սարակապից են: Կրթությունը՝ 7-ամյա:

Քնա մայրիկ մահս տեսա



Մարգարյան Լիզա Գուրգենի
Ծնվել է 1935թ. Քարաբերդում: Նախնիները գաղթել են Մուշից՝ 1915թ.:
Կրթությունը՝ ութնամյա:

Էս իմ յարը ֆռանկ է



Սարից իջար, ես տեսա,
Լե, լե, լե, լե, լե, լե,
Չէղար յար, կենեմ փեսա,
Դե քելե, դե ցոլա, սիրուն յար:

Արի տանեմ Արազը,
Լե, լե, լե, լե, լե, լե,
Ձեբդ լցնեմ չարազը,
Դե քելե, դե ցոլա, սիրուն յար:

Խաղ ասեմ ու խաղցնեմ,
Լե, լե, լե, լե, լե, լե,
Թևեր տամ ու թռցնեմ,
Դե քելե, դե ցոլա, սիրուն յար:

Հովհաննիսյան Մանյա Վազգենի
Ծնվել է 1935թ. Լեռնակերտում: Նախնիները՝ Մուշից ու Ալաշկերտից են:
Կրթությունը թերի միջնակարգ:

Շուշո



Շուշոն կերթա դեպի մարագ,
Մեծ բըրդընճին մեղր ու կարագ,
Բոյին մեռնիմ չինար, բարակ,
Մարալ Շուշո, ջեյրան Շուշո,
Նազուկ մեջքիդ հեյրան, Շուշո:

Շուշոն կերթա դեմ ամրոցին,
Ձուխտակ շամամ մըջ յուր ծոցին,
Նեկտար դնեմ սրտիս խոցին,
Մարալ Շուշո, ջեյրան Շուշո,
Նազուկ մեջքիդ հեյրան, Շուշո:

Առավոտյան կելնի քամին,
Կշընգշընգա օսկե ծամին,
Շուշոն կավլե հենց էդ պահին,
Մարալ Շուշո, ջեյրան Շուշո,
Նազուկ մեջքիդ հեյրան, Շուշո:

Հովհաննիսյան Վանյա Սաղաթելի
Ծնվել է 1944թ. Նոր Կյանքում: Նախնիները Խնուսից են:
Կրթությունը՝ բարձրագույն:

Տիկին, արի ընձի լսե



Հովհաննիսյան Վանյա Սաղաթելի
Ծնվել է 1944թ. Նոր Կյանքում: Նախնիները Խնուսից են:
Կրթությունը՝ բարձրագույն:

Տաճիկը նոր ջուրն անցավ



Վարդի պես պահեցի,
Մինչև մարդ էրի,
Բարբարոս թուրքերին,
Տվեցի գերի
Աման, վառվում եմ:

Ավագյան Օֆիկ Մանասի
Ծնվել է 1948թ. Փանիկում: Նախնիները Փանիկից են:
Կրթությունը՝ միջնակարգ:

Բուլելի



Գնացել ու էկել ես բուլելի,
Ման էկէլ ու գտել ես բուլելի:
Հայ բուլելի, բուլելի, բուլելի,
Ջան բուլելի, բուլելի, բուլելի:

Գնա-գնա գալիս եմ բուլելի,
Ետևիցդ լալիս եմ բուլելի:
Հայ բուլելի, բուլելի, բուլելի,
Հարսանիքին է իմ յարի, բուլելի:

Էս ինչ անուշ ղայդա է, բուլելի,
Թազա սեր ու սավդա է, բուլելի:
Հայ բուլելի, բուլելի, բուլելի,
Ջան բուլելի, բուլելի, բուլելի:

Կանաչել են արտերը, բուլելի,
Շատացել են դարչդերը, բուլելի:
Հայ բուլելի, բուլելի, բուլելի,
Հարսանիքին է իմ յարի, բուլելի:

Աղամանի աղը տես, բուլելի,
Մունդառ բերնիդ խաղը տես, բուլելի:
Հայ բուլելի, բուլելի, բուլելի,
Ջան բուլելի, բուլելի, բուլելի:

Ելար, մտար մարագը, բուլելի,
Կերար գորտի կարագը, բուլելի:
Հայ բուլելի, բուլելի, բուլելի,
Հարսանիքին է իմ յարի, բուլելի:

Էսօր օրը կիրակի, բուլելի,
Թող դուշմանս տրաքի, բուլելի:
Հայ բուլելի, բուլելի, բուլելի,
Ջան բուլելի, բուլելի, բուլելի:

Անցա պատի օլորը, բուլելի,
Բռնեցի նախշուն լորը, բուլելի:
Հայ բուլելի, բուլելի, բուլելի,
Հարսանիքին է իմ յարի, բուլելի:

Խնձոր քցի՝ ֆռֆռաց, բուլելի,
Թուշըդ պաչի՝ մռմռաց, բուլելի:
Հայ բուլելի, բուլելի, բուլելի,
Ջան բուլելի, բուլելի, բուլելի:

Ալեքսանյան Ցողիկ Շահենի
Ծնվել է 1952թ. Հայկաձորում, բնակվում է Իսահակյան գյուղում:
Նախնիները Կարսից են: Կրթությունը՝ միջնակարգ:

Օրոր



Հովհաննիսյան Մանյա Վազգենի
Ծնվել է 1935թ. Լեռնակերտում: Նախնիները՝ Մուշից ու Ալաշկերտից են:
Կրթությունը՝ թերի միջնակար:

Նշանդրեքի երգ





Ճավոշյան Անահիտ Արտաշեսի
Ծնվել է 1956թ. Փանիկում: Նախնիները Կարինից են:
Կրթությունը՝ միջնակարգ:

Աշխարհումս ես մեկ այգի ունեցա



Ավագյան Օֆիկ Մանասի
Ծնվել է 1948թ. Փանիկում: Նախնիները Փանիկից են:
Կրթությունը՝ միջնակարգ:

Էս աշխարհն էլ երազի պես



Ճավռշյան Անահիտ Արտաշեսի
Ծնվել է 1956թ. Փանիկում: Նախնիները Կարինից են:
Կրթությունը՝ միջնակարգ:

Արի տանեմ Արազը



Ձեբդ լցնեմ չարազը,
Վախենամ քնիմ,
Քնով ընգընիմ,
Գոզալս անցնի, չիմանա:

Ես ինչ անեմ, դու արիր,
Վախենամ քնիմ,
Քնով ընգընիմ,
Գոզալս անցնի, չիմանա:

Ձոռով սիրո տեր արիր,
Վախենամ քնիմ,
Քնով ընգընիմ,
Գոզալս անցնի, չիմանա:

Սմբատյան Սվետլանա Վաղարշակի
Ծնվել է 1942թ. Քարակերտում, բնակվում է Իսահակյան գյուղում:
Նախնիները՝ Սարակապից են: Կրթությունը՝ 7-ամյա:

Ծերություն



Էլ չեմ կարող խմել արաղ,
Որ հետներդ կանչեմ ես խաղ,
Սրտիս վրա թողեցիր դարդ,
Անտեր մնաս դու, ծերություն:

Էլ ինչ կանեմ կարմիր արև,
Սպիտակել է մազերս սև,
Կողքովս կանցնին, չեն տա բարև,
Պատճառը դու ես, ծերություն:

Մանուկյան Թամար Գուրգենի
Ծնվել է 1966 թ.: Նախնիները Սպանդարյանից են:
Կրթությունը՝ միջնակարգ:

Ջան գյուղում



Հովհաննիսյան Մանյա Վազգենի
Ծնվել է 1935թ. Լեռնակերտում: Նախնիները՝ Մուշից ու Ալաշկերտից են:
Կրթությունը՝ թերի միջնակարգ:

Կլոր գյունա բախան



Սմբատյան Սվետլանա Վաղարշակի
Ծնվել է 1942թ. Քարակերտում, բնակվում է Իսահակյան գյուղում:
Նախնիները՝ Սարակապից են: Կրթությունը՝ 7-ամյա: